

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԱՀՄՈՒԴ ՖԻՐՈՒՋԻ ՄՈՂԱԴԴԱՄ**

**ԱՆԳԼՈՍԵՐԻԿՅԱՆ և ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ԻՐԱՆԻ  
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ՝ ՀԻՄՔ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՄԱՐԿ ՏՎԵՆԻ և ՀՈՒՇԱՆԳ ՄՈՐԱԴԻ  
ՔԵՐՄԱՆԻԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ժ. 01.07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2021**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

**Գիտական ղեկավար՝**

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
**Քրիստինե Հենրիկի Բեջանյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Կառլեն Ռաֆայելի Մատինյան**

բանասիրական գիտությունների  
թեկնածու  
**Գառնիկ Թելմանի Գևորգյան**

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. մարտի 12-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի 066 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 420 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի փետրվարի 1-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ՝

  
**Ա. Վ. Եգանյան**

## **ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հուշանգ Մորադի Քերմանիին հանդիսանում է մանկապատանեկան գրականության ոլորտում իրանցի մեծանուն և հայտնի գրողներից մեկը, ում կյանքին և ստեղծագործություններին նվիրված են բազմաթիվ ուսումնասիրություններ: Սակայն այդ աղբյուրներից որևէ մեկում համալիր ու ամբողջական տեսքով չեն ուսումնասիրվել և վերլուծվել նրա ստեղծագործություններն ու գաղափարները: Հետևաբար, Հուշանգ Մորադի Քերմանիի մասին հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ է հետազոտել նրա ստեղծագործությունները: Նաև տարբեր ամսագրերում տպագրվել են հարցազրույցներ, որոնք յուրաքանչյուրն իր ձևով կարող է առաջնորդել հետազոտողին, որպեսզի ճիշտ ուղիով ընթանա, սակայն դրանցից ոչ մեկն ամբողջական չէ համեմատության և համեմատական ուսումնասիրության համար:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Մինչ օրս տարբեր աշխատություններում քննվել է «մանկական գրականություն» հասկացության սահմանման հարցը: Միննույն ժամանակ զանազան հակիրճ պատմական ակնարկներ են ներկայացվել Անգլիայում, ԱՄՆ-ում, Իրանում և այլուր մանկապատանեկան գրականության առանձին հեղինակների վերաբերյալ: Սույն ատենախոսության շրջանակում առաջ է քաշվել այն դրույթը, որ պարսկերենում մանկապատանեկան գրականությունը, չնայած հեռավոր անցյալում գոյություն է ունեցել բանախոսության և բանավոր հեքիաթների ու զրույցների շրջանակներում, սակայն որպես գրական ինքնուրույն տեսակ հանդես է գալիս քսաներորդ դարում և իր զարգացման ընթացքում ազդեցություն է կրել անգլոամերիկյան գրական ավանդույթներից:

Դեռևս անդրադարձ չի կատարվել պարսկերենում մանկապատանեկան գրականության զարգացման ընթացքի վրա անգլոամերիկյան գրական ստեղծագործությունների ազդեցությանը: Այդ հարցին է նվիրված սույն հետազոտությունը:

Պարսկերեն լեզվով մանկապատանեկան գրականության կապը՝ անգլերենով գրված ստեղծագործությունների հետ ավելի հասկանալի դարձնելու նպատակով, համեմատություն է կատարվել Հուշանգ Մորադի Քերմանիի և Մարկ Տվենի աշխատանքների միջև:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Հետազոտության նպատակն է հիմնավորել, որ Իրանի մանկապատանեկան գրականությունը, որն ինքնուրույն սկսեց զարգանալ քսաներորդ դարում և համաշխարհային գրականության մեջ իր տեղը գրավեց, սեփական գրական անկախությունն ապահովելու ճանապարհին վայրիվերումներով լի ուղի է անցել, մասամբ նաև օգտվելով համաշխարհային մանկական գրականությունից: Հեղինակը նման տեսության հանգելու համար ուսումնասիրել է Հուշանգ Մորադի Քերմանիի ստեղծագործությունը՝ որպես Իրանում և աշխարհում մանկապատանեկան գրականության երևելի գրող, և ամերիկացի գրող Մարկ Տվենի հետ համեմատության արդյունքում հանգել այն եզրակացության, որ «Իրանում մանկապատանեկան գրականության ասպարեզում գրչարվեստը, կամա թե ակամա, ազդեցություն է կրել տասնիններորդ դարի անգլոամերիկյան գրականության ավանդույթներից»: Ատենախոսության մեջ ցույց է տրվում, որ տարբեր ժողովուրդների մանկապատանեկան

գրականությունների միջև բավականին ընդհանրություններ կան, որոնք պայմանավորված են մանկապատանեկան գրականության ընդհանուր բնույթով. Մանկապատանեկան ստեղծագործությունների հեղինակները դիմում են ընդհանուր թեմաներին:

Հարկ է նշել, որ այս նպատակը հստակեցնելու համար, սույն աշխատանքում նաև ներկայացվել է Իրանում համաշխարհային մանկական գրականության թարգմանության պատմական համառոտ ակնարկ:

### **ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Այս երկու հեղինակներին վերաբերվող բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել և առկա են մեծաթիվ հոդվածներ ու գրքեր: Սակայն այդ հետազոտական աշխատանքներից յուրաքանչյուրը միակողմանի մոտեցմամբ էր և հնարավոր չէր գտնել այնպիսի ուսումնասիրություն, որն այս երկու հեղինակների ստեղծագործություններում ուշադրություն դարձներ կառուցվածքային ու բովանդակային տարբեր կողմերին: Եվ այն ինչ առավել կարևոր է, մինչ այս որևէ համեմատական հետազոտություն չի ներկայացվել Մարկ Տվենի և Հուլանգ Մորադի Քերմանիի ստեղծագործությունների վերաբերյալ: Այդ իսկ պատճառով սույն հետազոտությամբ փորձ է արվել վերը նշված հեղինակների ստեղծագործությունների նկարագրական ու վերլուծական ուսումնասիրության շնորհիվ բացահայտել, թե ինչ ընդհանուր գծեր կան այս երկու գրողների աշխատանքներում:

Աշխատանքի **հիմնախնդիրներ** են դառնում հետևյալ հարցադրումները՝

- ուսումնասիրել մանկական գրականության ձևավորման հետազոտություն,
- ներկայացնել անգլոամերիկյան մանկական գրականության զարգացման

ընթացքը և տալ ավանդույթի փոխանցումն իրանական գրականություն:

Եվ առաջ են գալիս հետազոտության հետևյալ հարցերը՝

- ո՞րն է ուսումնասիրվող երկու գրողների համաշխարհային համբավի պատճառը,
- արդյո՞ք հնարավոր է մեկի մյուսի ազդեցությանը ենթարկվելու հանգամանքը,
- այս երկու գրողների մոտ ազդելու և ազդեցության ենթարկվելու հնարավորության առկայության դեպքում, այն ո՞ր դեպքերում և ինչպե՞ս է տեղի ունեցել:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Աշխատանքում օգտագործվել են պարսկերեն և անգլերեն տարբեր աղբյուրներ, որոնցից կատարված հղումները նշված են համապատասխան տողատակերով:

Առենախոսության մեջ համառոտ նկարագրելով աշխատանքի մեթոդաբանական հիմքը, ներկայացվել է թեմային առնչվող քննադատական գրականության բավականին ընդարձակ ակնարկ, ինչպես նաև ընդհանուր գծերով՝ նյութի ուսումնասիրության աստիճանը, հարցի պատմությունը, հիմնվելով Մ.Աբրամսի, Մ.Կարտի, Մ.Հաթավեյի, Ռ.Քիմբերլեյի, Պ.Վահաբզադեյի, Ե. Աբրահամյանի, Ֆ.Ալշոքրիի, Հ.Ռահիմյանի և այլ գրականագետների ու քննադատների աշխատությունների վրա:

Աշխատանքում օգտագործվել են պատմագրական, համեմատական, համադրական, ինչպես նաև մշակութաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության առարկա է հանդիսացել Մարկ Տվենի և Հուլանգ Մորադի Քերմանիի ստեղծագործությունները, ինչպես նաև ժամանակակից մամուլում տպագրված հոդվածները:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության նյութը կարող է օգտագործվել համեմատական գրականության թեմաներով տարբեր տեսական վերլուծություններում ու աշխատություններում: Այն ունի գործնական նշանակություն և կարող է կիրառվել Իրանի մանկական գրականությանը նվիրված դասախոսություններում, Հուշանգ Մորադի Քերմանիի ստեղծագործության և անգլոամերիկյան գրականության հետ նրա առնչության խնդիրներին նվիրված հատուկ դասընթացներում:

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվ. գրականության ինստիտուտի Արտասահմանյան գրականության և համեմատական գրականագիտության բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են տպագրված գիտական յոթ հոդվածներում:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, որոնք ունեն համապատասխան տրոհումներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից՝ պարսկերեն, անգլերեն լեզուներով: Այն շարադրված է 181 համակարգչային էջի վրա (ներառյալ գրականության ցանկը և հավելվածը):

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ ներկայացված է ատենախոսության ուսումնասիրության առարկան, հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, շարադրված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, նշված է, թե որն է գիտական նորույթը:

## **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

### **ԱՆԳԼՈՍԵՐԻԿՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՄԻՆԶԵՎ 20-ՐԴ ԴԱՐ**

Առաջին գլխի առաջին՝ «**Մանկական գրականության կայացման և զարգացման պատմությունը**» ենթաբաժնում անդրադառնալով տարբեր երկրներում մանկական գրականության հասկացությանը նվիրված բազմաթիվ հետազոտություններին, նկարագրվել են տվյալ գրականության բնորոշ գծերը: Առաջինը՝ գլխավոր դերը հատկացվում է երեխաներին: Երկրորդը՝ թեմատիկան պետք է համապատասխանի տարիքային այդ խմբի մտածողությանը: Ստեղծագործությունը ծավալով չպետք է շատ մեծ լինի, բայց պետք է շատ նկարներով զարդարված լինի՝ հատկապես մանուկների համար նախատեսված գրքերում: Պարտադիր պայմաններից են պարզ լեզուն, շատ երկխոսություններ և գործողություններ, քիչ նկարագրություն, շատ արկածներ: Կարևորագույն հատկանիշներից է երջանիկ ավարտը՝ բարին հաղթում է չարին: Եվ չպետք է անտեսել նաև մանկական գրականության գլխավոր նպատակը, որը դաստիարակչական է:

Հարկ է նշել, որ ժողովրդական հեքիաթի թեմատիկան և պոետիկան լիարժեք համապատասխանում է մանկական գիտակցության առանձնահատկություններին: Եվ սյուժեն, և հերոսները, և լեզուն, և հումորը միտված են ոչ միայն զբաղեցնել երեխային, այլ նաև միաժամանակ ձևավորեն էթիկայի նորմերի մասին հասկացությունները: Բայց այդ նպատակի համար ծառայում է ոչ թե ուղղակի խրատը, այլ ուրիշ միջոցներ՝

բացասական կերպարները ներկայացվում են հեզանքով, դրական հերոսները սեր են առաջ բերում:

Մանկական գրականությունը բաժանվում է զուտ մանկական (այսինքն, գրքեր, որոնք հատուկ գրվել են երեխաների համար) և մանկական ընթերցանության, որն ընդգրկում է այն ստեղծագործությունները, որոնք ի սկզբանե չեն հասցեագրվել երեխաներին, բայց դարձել են մանկական (օրինակ, Թուլքինի գրքերը): Գոյություն ունի նաև հակառակ գործընթացը: Օրինակ, կարելի է նշել առնվազն երկու գիրք՝ գրված երեխաների համար, որոնք դարձել են մեծահասակների ոգեշնչման առարկա: Մեկը՝ դասական, Լ. Քերոլի «Ալիսի արկածները», մյուսն՝ ժամանակակից, Զ.Ռոլինգի Հարի Փոթերի մասին գրքերը:

Անկասկած հարկ է նշել, որ մանկական գրականության սկզբնավորումը կապված է առաջին դասագրքերի ստեղծման հետ: Կարելի է ասել, որ մանկական գրականության զարգացման սկզբնական փուլը կապ ունի առաջին այբբենարանների ստեղծման հետ:

Մանկական գրականության արմատները հասնում են մինչև բանավոր գրականություն և կրոնական տեքստեր: Տպագրության ի հայտ գալու, տեղի ժողովրդական գրականության ծաղկման և դրանց գրի առնվելու արդյունքում, փոփոխման է ենթարկվում անգլերեն գրական լեզուն, և այսպես, ձևավորվում են գրական տարբեր ժամանակաշրջաններ: Այդ շրջաններից յուրաքանչյուրն առանձին ուշադրության է արժանանում աշխատանքում և նշվում են տվյալ ժամանակաշրջանի մանկապատանեկան գրական ստեղծագործությունները:

Անդրադառնալով պատմական, քաղաքական ու հասարակական զարգացումներին և դրանց արդյունքում անգլիական գրականության ուղղությունների բացահայտմանը, ներկայացվել են յուրաքանչյուր ժամանակաշրջանի գրական առավել հայտնի դեմքերը, ուսումնասիրվել են մանկապատանեկան գրականության տեղը, վիճակն ու դերը գրական զարգացումներում, ինչպես նաև վերլուծական ու հետազոտական մոտեցումներով խոսվում է մանկապատանեկան գրականության զարգացման վրա գրական հայտնի դեմքերի ու նրանց ստեղծագործությունների ազդեցության մասին: Ներկայացվել են մանկապատանեկան առաջին վեպերի ծագման ընթացքը, ինչպես նաև մանկական գրական ստեղծագործությունների հեղինակների մանկավարժական ու ուսուցողական մոտեցումները:

Երկրորդ՝ **«Անգլոամերիկյան մանկական գրականությունը Լուսավորության դարաշրջանում»** ենթաբաժնում քննվում է մանկապատանեկան գրականության զարգացման ընթացքը տիրող գրական ուղղություններին զուգահեռ, և խոսվում է մանկական գրականությունը ուսուցողական ու մանկավարժական մոտեցումներից ձերբազատելու ուղղությամբ ռոմանտիկների աշխատանքի մասին: Այստեղ ուսումնասիրվել են գրական բոլոր ուղղություններից մանկապատանեկան գրականության ազդեցություն կրելու և փոխադարձ ազդեցություն թողնելու խնդիրը:

Շարունակելով թեման, երրորդ՝ **«Անգլոամերիկյան մանկապատանեկան գրականությունը (18-րդ դարի վերջ - 19-րդ դարի սկիզբ)»** ենթաբաժնում անդրադառնալով մանկապատանեկան գրականության մեջ թարգմանական գործերի սկզբնավորմանը, տարբեր լեզուներից բազմաթիվ ստեղծագործությունների անգլերենի թարգմանություններին և այդ լեզվի միջոցով այլ ազգերին դրանց ներկայացնելու հանգամանքին, ապա՝ Անգլիայի ու ԱՄՆ-ի սահմաններից դուրս այլ երկրներում այդ

ստեղծագործությունների տարածման ընթացքին: Ինչպես նաև ուսումնասիրվում է անգլերենից այլ լեզուների թարգմանված ստեղծագործությունների դերը մանկական գրականության զարգացման գործում: 19-րդ դարից սկսած մանկապատանեկան գրականության ստեղծման մեջ լուրջ մասնակցություն են ունենում ամերիկացի գրողները, ինչն էլ հանգեցնում է աշխարհում մանկապատանեկան գրականության տարածմանը, որն էլ հեղինակի կողմից ուսումնասիրման ու վերլուծության առարկան է դարձել այս բաժնում:

Առաջին գլխի չորրորդ՝ **«Իրանի մանկական գրականության ձևավորումը՝ պարսկական դասական գրականության համատեքստում»** ենթաբաժնում, պարսկերեն գրերի ու լեզվի ծագման պատմության շրջանակներում ընդգծվել է, որ այս շրջանում առանձին մանկական գրականություն չի եղել և այդ շրջանի գրքերում, որտեղ երեխաներին վերաբերվող թեմաներ կան, ավելի շուտ այն վերաբերում է մանկան ուսումնադաստիարակչական խնդիրներին: Այս դրույթը փաստերով հիմնավորելու համար, աշխատանքում թվարկվել են երեխաների համար առաջադրված մանկավարժական բնույթի որոշ ստեղծագործություններ:

Անդրադառնալով պարսկերենում մանկական գրականությանը մինչ Սահմանադրական հեղափոխությունը (7-20-րդ դդ.), կարևորվում են գրական, քաղաքական ու սոցիալական իրադարձությունները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրական ցանկացած իրողություն հող է պատրաստում գրականության մեջ նոր շարժման ձևավորման համար: Պարսկական դասական ստեղծագործություններից շատերը նպաստում են մանկապատանեկան գրականության հարստացմանը: Տրամաբանական է որոշ դասական ստեղծագործությունների ձևավորման ժամանակահատվածում մանուկների և դեռահասների համար նախատեսված առանձին գրականության ստեղծումը: Այդ շարքի դասական ստեղծագործությունների օրինակներից են՝ «Քելիլեն ու Դեմնեն» և «Մարգրանամեն», որոնք օժտված են եղել մանկապատանեկան գրականության առանձնահատկություններով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկապատանեկան գրական ստեղծագործությունները հիմնականում ներկայացվել են քսաներորդ դարում, հիմք ընդունելով պարսկերեն լեզվով մանկական գրականության նախապատմությունը, դրանք ուսումնասիրվել են քսաներորդ դարի կտրվածքով, որը բաղկացած է երկու հիմնական հատվածներից՝

1. պարսկերեն լեզվով մանկական գրականությունը մինչ Սահմանադրական հեղափոխությունը (7-20-րդ դդ.),

2. պարսկերեն լեզվով մանկական գրականությունը Սահմանադրական հեղափոխությունից հետո (20-րդ դար):

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

### **ԱՆԳԼՈՍԵՐԻԿՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ**

Երկրորդ գլխի առաջին՝ **«Անգլոամերիկյան մանկական գրականությունը քսաներորդ դարում»** ենթաբաժնում, փաստագրելով, որ մանկապատանեկան գրականությունը տասնիններորդ դարի կարևոր ուղղությունների աջակցությամբ և այդ դարում գրանցված նորույթների շնորհիվ, առաջ շարժվեց՝ գրականության ասպարեզում ամուր

դիրք գրավելու և ուժեղ տեսական հիմունքներ գտնելու նպատակով, ընդգծվել է, որ քսաներորդ դարը համաշխարհային գրականության մեջ մանկապատանեկան գրականության՝ որպես գրականության ինքնուրույն տեսակ, ձևավորվելու շրջան է:

Երկրորդ՝ «Պարսկերեն լեզվով մանկական գրականությունը Սահմանադրական հեղափոխությունից հետո (20-րդ դար)» ենթաբաժնում նկարագրվել է սահմանադրական իրադարձություններից ու 1919թ. հեղաշրջումից հետո պարսկական գրականության կարճատև ընդմիջումը, որից հետո պարսկական չափածոյի և արձակի տիրույթում ի հայտ եկավ գրական զարգացումների նոր ալիք: Պարսկական բանաստեղծությունը փոփոխվեց կառուցվածքի ու բովանդակության առումով, սակայն որպեսզի մանկապատանեկան գրականությունը կարողանա օգտվել նրանից և ստեղծվեն մանկական բանաստեղծություններ, դեռևս ժամանակ էր պահանջվում: Իսկ պարսկական արձակի համար առիթն ավելի բարենպաստ էր: Արևմտյան առանձին պատմվածքների ու վեպերի թարգմանությունը նախադրյալ ստեղծեց պարսկական նորագույն պատմվածքների ձևավորման համար: Մեծանուն գրողներ, այդ թվում՝ **Ջամայզահեն, Բոզորգե Ալավին, Սադեդ Չուբաքը, Սադեդ Հեդայաթը** և այլն, ասպարեզ եկան, ինչն էլ հող պատրաստեց մանկապատանեկան գրականությունում արժեքավոր ստեղծագործությունների ձևավորման համար: Ինչպես աշխարհում քսաներորդ դարը կոչվեց «մանկան դարաշրջան», այդպես էլ Իրանում աննախադեպ շարժում սկսվեց մանկապատանեկան գրականության ոլորտում:

Ուսումնասիրելով պարսկերեն լեզվով մանկական գրականությունը Սահմանադրական հեղափոխությունից հետո (20-րդ դար), նկարագրելով և վերլուծելով այդ ժամանակաշրջանում գրական զարգացումներին հանգեցնող իրողությունները, մանկապատանեկան գրական դեմքերին ու ստեղծագործություններին առավել հստակ ծանոթանալու նպատակով, նախատեսել ենք երեք հատված կամ շրջան: Դրանք են՝

✓ սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի մանկական գրականություն (1920-1950թթ.),

✓ սահմանադրությանը հաջորդող երկրորդ սերնդի մանկական գրականություն (1950-1980թթ.),

✓ սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդի մանկական գրականություն (1980-2010թթ.):

Վերը նշված բաժիններում վերլուծվում, ուսումնասիրվում և ներկայացվում են յուրաքանչյուր շրջանի հեղինակները և նրանց գրական ստեղծագործությունները՝ քաղաքական ու սոցիալական պայմաններին համապատասխան: Այդ թեմաներին զուգահեռ, հարկ եղած դեպքում, խոսվել է գրողների կրած ազդեցության կամ Իրանի մանկապատանեկան գրականության վրա արևմտյան գրական ուղղությունների ազդեցության մասին, ըստ անհրաժեշտության՝ փաստերով հիմնավորելով դրանք:

Սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի մանկական գրականության (1920-1950թթ.) կարևոր առանձնահատկություններից է քաղաքական մտքերի արտահայտումը և գաղափարախոսական խոհերի պարզաբանումը ժողովրդական լեզվով և հասարակության բոլոր դասակարգերում ներթափանցելը:

Մանկական գրականության երկրորդ սերնդում (1950-1980թթ.) կարելի է հանդիպել այնպիսի կերպարների, ովքեր հասակ առան առաջին սերնդի մշակութային ու գրական միջավայրում և նույնիսկ դասեր սերտեցին ու ընդօրինակեցին այդ շրջանի



գրողներից, սակայն վերջում նոր ուղի բացահայտեցին և նպաստեցին տարբեր կաղապարով ու ձևաչափով մանկապատանեկան գրականության ձևավորմանը:

Թուրան Միրհադիի շնորհիվ կատարելագործվեցին Իրանում մանկապատանեկան ժամանակակից գրականության հիմքերը: Ֆրանսիայում գտնվելու ժամանակ նա բացահայտեց մանկական գրականության գիտական ու սոցիալական կողմերը: Այդ երկրում և կրթական համակարգի շրջանակներում նա բացահայտեց երեխաների սոցիալական ու մշակութային զարգացման գործում մանկական գրականության ու արվեստի անզուգական դերը, և դրանից հետո, երբ վերադարձավ Իրան, այդ վաստակած փորձառությունը գրույցների տեսքով կիսեց մյուսների հետ:

Իրանում մանկական գրականության հեղինակների երրորդ սերունդն (1980-2010 թթ.) այնպիսի ժամանակաշրջան մուտք գործեցին, որտեղ մտավոր ու սոցիալական հիմքերը, ինչպես նաև այս շրջանի Իրանի քաղաքական համակարգը հիմնովին փոփոխվեցին: Թագավորական համակարգին փոխարինեց Իսլամական հանրապետությունը և բացի իշխանական կառույցից, փոփոխվեցին նաև հասարակության մեջ տիրող գաղափարախոսական սկզբունքները: Մանկապատանեկան գրականությունը, որը ձևավորվեց երկու՝ սահմանադրական ու իսլամական հեղափոխությունների միջև ընկած ժամանակահատվածում և աշխարհում զբաղեցրել էր իր ընդունելի տեղը, ահա պետք էր նոր ուղիով առաջնորդվեր: Սկիզբ առավ գրաքննությունը և արգելվեց բազմաթիվ գրական ստեղծագործությունների տպագրությունը: Եթե տպագրվում էր որևէ մանկապատանեկան ստեղծագործություն, ապա դրա մեջ նկատելի էին ավելի շատ մեծահասակին բնորոշ հայացքներ և պաշտոնապես զերծ էր մանկական բառային ու իմաստային տարրերից: Տարբեր պատճառներով, այդ թվում՝ կրոնական հայացքներից ու նույնիսկ տնտեսական սահմանափակումներից ելնելով, մանկական գրքերում պատկերների տարրն ավելի աննշան դարձավ: Շատ սակավաթիվ էին թարգմանված ստեղծագործությունների հրատարակումները: Այդուհանդերձ, առանձին հեղինակներ, ինչպիսին էր Հուշանգ Մորադի Քերմանին, ում ստեղծագործություններում նկարագրվում էին հանրության կյանքի խնդիրներն ու ելևէջները, կարողացան տպագրել իրենց աշխատանքները:

1982թ. հրատարակվեց «Մաջիդի պատմվածքները» հինգ հատորյակը, որի առաջին հատորը տպագրվել էր նախքան հեղափոխությունը: Մանկական գրականության ոլորտի մասնագետներից Մոհամմադ Միրքիանին սահմանադրությանը հաջորդող յոթերորդ տասնամյակը (1980-1990թթ.) համարում է մանկապատանեկան գրականության փոթորկոտ սկիզբը:

1980-ականների գրողներն Իրանում ազդեցություն էին կրել ոչ միայն իսլամական հեղափոխության մշակութային զարգացումներից, այլ նաև սոցիալական մեծ զարգացումներից, այդ թվում՝ Իրան-Իրաք ութամյա պատերազմը, ինչպես նաև սահմանադրությանը հաջորդող յոթերորդ տասնամյակի կրոնական ուղղության մտավորականների մանկավարժական ու հոգեբանական խոհերը:

Իրանի երեխաներն ու դեռահասները քսաներորդ դարի վերջին տասնամյակում, պատերազմից և երկրում հարաբերական անդորրի հաստատումից հետո, կարողացան տեսնել իրենց հատուկ գրականության փայլուն դրսևորումները: Իհարկե, այդ տասնամյակում նրանց օգնության հասան նաև տեխնոլոգիան ու լրատվամիջոցների ընդլայ-

նումը և դա հանգեցրեց նրան, որ համաշխարհային որոշ նշանավոր գրական ստեղծագործություններ մեղիայով ներկայացվեն ֆիլմերի, ներկայացումների և այլ տեսքով:

Այս շրջանի հայտնի գրողներից, որոնց շարքում ոմանք ձևավորվեցին երկրորդ սերնդում, կարելի է հիշատակել նաև հետևյալ անունները. **Մոսթաֆա Ռահմանդուսթ, Աֆսանե Շաբաննեժադ, Ֆերեյդուն Ամուզադեի Խալիլի, Մոհամմադեզա Բայրամի, Շահրամ Շաֆիի, Հոսեյն Էբրահիմի Ավանդ, Ահմադեզա Ահմադի, Ամիրհոսեյն Ֆարդի, Ղադամալի Սարամին և ուրիշներ:**

Հարկ է նշել, որ սահմանադրությանը հաջորդող շրջանի երրորդ սերնդի գրողներից շատերը դեռևս ստեղծագործում են մանկապատանեկան գրականության բնագավառում և նրանց ստեղծագործությունների կամ մտածելակերպի մասին կարծիք հայտնելը չի կարող կատարյալ ճշգրիտ համարվել, քանի որ նրանց գրական գործունեությունը դեռևս շարունակվում է: Հետևաբար բավարարվել ենք ընդամենը նրանց աշխատանքների թվարկմամբ, նկատի ունենալով այն փաստը, որ այդ հեղինակներից ոմանք ձևավորվել են երկրորդ սերնդի շրջանակներում:

**Իրանում սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդում մանկական գրականության ամենաակնառու հեղինակների առանձին ստեղծագործություններ**

Հեղինակի անունը	Ամենահայտնի ստեղծագործություններ	Հրատ. տարեթիվ	Հրատարակություն
<b>Ս. Բեհրանգի</b>	1. Ուլդուզն ու խոսող տիկնիկը	1966	Դոնյա
	2. Ուլդուզն ու ագռավները	1966	Դոնյա
	3. Մի դեղձ ու հազար դեղձ	1966	Ռուզբեհան
	4. Բազուկ վաճառող տղան	1968	Դոնյա
	5. Բեհրանգի պատմվածքները	1969	Շամս
	6. Սև ձկնիկը	1976	Մանկապատանեկան մտավոր գարգ. կենտ.
<b>Ն. Էբրահիմի</b>	1. Անձրևի առասպելը	1967	Ամիր Քաբիր(Շոքուֆե)
	2. Ես չգիտեմ իմ տան ճանապարհը	1969	Ամիր Քաբիր(Շոքուֆե)
	3. Պատուհանից նայիր	1972	Երեխաներին ու դեռահասներին ուղեկից
	4. Ագռավները	1975	Մանկապատանեկան մտավոր գարգ. կենտ.
	5. Սկյուռները	1977	Մանկապատանեկան մտավոր գարգ. կենտ.
	6. Գորգի ծաղիկների պատմությունը	1978	Մանկապատանեկան մտավոր գարգ. կենտ.
	7. Կորած այծը	1979	Մանկապատանեկան մտավոր գարգ. կենտ.
	8. Արևի անձրևն ու սալիկի պատմությունը	1983	Ամիր Քաբիր(Շոքուֆե)
	9. Տանից հեռու	1990	Երեխաներին ու դեռահասներին ուղեկից

**Իրանում սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդում մանկական գրականության ամենականառու հեղինակների առանձին ստեղծագործություններ (շարունակություն)**

<b>Հեղինակի անունը</b>	<b>Ամենահայտնի ստեղծագործություններ</b>	<b>Հրատ. տարեթիվ</b>	<b>Հրատարակություն</b>
<b>Ֆ.Ֆարջամ</b>	1. «Թաջմահը» և «Հարսը» պիեսները	1964	Քեթաբհայե Ջիբի /Գրպանի գրքեր/
	2. Արևի բյուրեղի ծաղիկը	1983	Մանկապատանեկան մտավոր գարգ. կենտ.
	3. Անկոչ հյուրերը	1991	Մանկապատանեկան մտավոր գարգ. կենտ.
<b>Ֆ. Դուսթար</b>	Առաջին օրենքը	1979	Մանկապատանեկան մտավոր գարգ. կենտ.
<b>Ռ.Ռահզոզար</b>	1. Նապաստակները	1985	Սեփիդե
	2. Մի' ասա «չեմ կարող»...	1989	Արվեստի բաժին
	3. Անձրև տեղա, անձրև չտեղա:	1991	Մադրեսե
	4. Թագավորի խորոզը	1991	Փայամե Ազադի
	5. Փխտյի պոչը	---	Մադրեսե
<b>Ղ. Ղազինուր</b>	1. Ջուր ու ցորեն	1970	Սաֆիալի Շահ
	2. Ջուրն աղբյուրից բաժանվելուց հետո ի՞նչ արեց:	1973	Ամիր Քաբիր
	3. Ունևոր ու չքավոր դառնալը	1976	Գոլշանի
	4. Միասին	1976	Շաբգիր
	5. Աշխարհի լավագույն գազանանոցը	1977	Շաբգիր
	6. Երագանք	1978	Ռուզբեհան
	7. Նորոգման կես	1985	Ռուզբեհան
	8. Կյանքը	1990	Ռուզբեհան
<b>Մ.Քարիմզադե</b>	1. Թագազրկում	1979	Էլիամ
	2. Գուչին հորաքրոջ հեքիաթները	1979	Թուքա
<b>Հ. Մորադի Քերմանի</b>	1. Մաջիդի պատմվածքները (1)	1981	Սահաբ քեթաբ
	2. Մաջիդի պատմվածքները (2)	1984	Սահաբ քեթաբ
	3. Մաջիդի պատմվածքները (3)	1985	Սահաբ քեթաբ
	4. Մաջիդի պատմվածքները (4)	1987	Սահաբ քեթաբ
	5. Մաջիդի պատմվածքները (5)	1989	Սահաբ քեթաբ

<i>Իրանում սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդում մանկական գրականության ամենաակնառու հեղինակների առանձին ստեղծագործություններ (շարունակություն)</i>			
<b>Հեղինակի անունը</b>	<b>Ամենահայտնի ստեղծագործություններ</b>	<b>Հրատ. տարեթիվ</b>	<b>Հրատարակություն</b>
<b>Ն. Ջառինքեթ</b>	1. Իմ մանկության օրերը	1974	Մանկապատանեկան մտավոր զարգ. կենտ.
	2. Թրթուրի պատմությունը	1984	Մանկապատանեկան մտավոր զարգ. կենտ.
	3. Ա-ն այբուբենի սկիզբն է (1)	1986	Մանկապատանեկան մտավոր զարգ. կենտ.
	4. Ա-ն այբուբենի սկիզբն է (2)	1986	Մանկապատանեկան մտավոր զարգ. կենտ.
	5. Բազմաֆունկցիոնալ գործարանը	1989	Մանկապատանեկան մտավոր զարգ. կենտ.
<b>Մ. Գոլաբդառեյի</b>	1. Հեղափոխության ակնթարթները	1979	Սորուշ
<b>Ս.Թահթազ</b>	1. Ապրենք միասին	1977	Մանկապատանեկան մտավոր զարգ. կենտ.
	2. Արևի բանաստեղծը	1977	Մանկապատանեկան մտավոր զարգ. կենտ.
	3. Ամինի հավի աղոթքը	---	Մանկապատանեկան մտավոր զարգ. կենտ.
<b>Մ.Քաշքուլի</b>	1. Իմ կատուն	1989	Շաբավիզ
	2. Գետն ու արևը	---	Շաբավիզ

Քսաներորդ դարի Իրանի մանկապատանեկան գրականության ուսումնասիրության արդյունքում նկատելի են դառնում համապատասխան երեք հստակ ժամանակաշրջաններ՝ ա) ծագում, բ) կատարելագործում և ծաղկում (1950-1980 թթ.), գ) զարգացում և ներգործում:

Արդյունքում եզրահանգում է կատարվել առ այն, որ տասնիններորդ դարում գրի առնված արևմտյան գրական ստեղծագործությունները կարճ ժամանակ անց թարգմանվեցին պարսկերենի և այդ թարգմանություններն իրենց ազդեցությունն են թողել Իրանի մանկապատանեկան գրականության վրա: Այդ պատճառով էլ տասնիններորդ դարում գրի առնված անգլամերիկյան գրական ստեղծագործությունների որոշ առանձնահատկություններ նկատվում են քսաներորդ դարի պարսկական ստեղծագործություններում:

Երկրորդ գլխի երրորդ՝ «**Իրանում անգլամերիկյան մանկապատանեկան գրականության ստեղծագործությունների թարգմանությունները**» բաժնում, ելնելով թարգմանված գործերի կարևորությունից, ներկայացվել է համաշխարհային մանկական

գրականության ստեղծագործությունների պարսկերեն թարգմանություն-ների պատմական համառոտ ակնարկ:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՀՈՒՇԱՆԳ ՄՈՐԱԴԻ ՔԵՐՄԱՆԻԻ ԵՎ ՄԱՐԿ ՏՎԵՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնավորելով ԱՄՆ-ում և Անգլիայում տասնիններորդ դարի մանկապատանեկան ստեղծագործությունների և քսաներորդ դարի պարսկալեզու պատմվածքների միջև մշակութային ու գրական որոշ ընդհանրությունների առկայությունը, հիմք ընդունելով համաշխարհային արդի գրական տեսությունները և որդեգրելով համեմատական վերլուծության մեթոդը, զուգադրվել են Հուշանգ Մորադի Քերմանիի և Մարկ Տվենի ստեղծագործությունները, ուշադրություն դարձնելով համեմատական գրականության հիմունքներին և նշելով յուրաքանչյուրի ստեղծագործություններից օրինակներ, մատնանշվել են այդ ընդհանուր գծերը: Հաշվի առնելով կատարված ուսումնասիրություններն ու Մարկ Տվենի և Հուշանգ Մորադի Քերմանիի աշխատություններում հասարակության և ժողովրդի նշանակությունը, նախ առաջին՝ «**ԱՄՆ գրականությունը և Մարկ Տվենի ստեղծագործությունները**» և երկրորդ՝ «**Իրանի գրականությունն ու Հուշանգ Մորադի Քերմանիի ստեղծագործությունները**» ենթաբաժիններում ուսումնասիրվել է ժողովրդի և հասարակության տեղը վերոնշյալ երկու հեղինակներից յուրաքանչյուրի ստեղծագործություններում, ապա երրորդ՝ «**Մարկ Տվենի և Հուշանգ Մորադի Քերմանիի գրական ստեղծագործությունների ընդհանրություններն ու տարբերությունները**» ենթաբաժնում վերլուծական ու հետազոտական մոտեցմամբ համեմատվել են նրանց ստեղծագործությունները:

ԱՄՆ գրականության մեջ Մարկ Տվենը և Իրանի գրականության մեջ Հուշանգ Մորադի Քերմանին այն հեղինակներից են, որոնք իրենց ստեղծագործություններում անդրադարձել են անհատի կյանքի մարդկային ու ընդհանուր կողմերին, այդ իսկ պատճառով էլ նրանց ընթերցողների շրջանակն գերազանցում է նրանց երկրների քաղաքական ու աշխարհագրական սահմանները: Բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել այս երկու հեղինակների մասին և առկա են մեծաթիվ հոդվածներ ու գրքեր:

Մորադի Քերմանիի ստեղծագործություններից են՝ «Մաջիդի պատմվածքները», «Գորգագործության արհեստանոցի երեխաները», «Արմավենին», «Բռունցքը՝ մաշկի վրա», «Տակառը», «Աղավնին կուժի մեջ», «Մամայի հյուրը», «Քաղցր մուրաբան», «Նռան ժպիտը», «Տասնչորսերորդ զիշերվա լուսինը» և «Ո՛չ թացը և ո՛չ չորը», որոնցից մի քանիսը թարգմանվել են տարբեր լեզուներով:

Ուսումնասիրելով վերոնշյալ գրողների ստեղծագործությունները, ցանկանում ենք հատուկ ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ երկու հեղինակների ստեղծագործություններում առկա են հասարակության նկատմամբ խնդիրները, դրանց լուծման ձևերը:

Մարկ Տվենի բոլոր գործերը, այդ թվում՝ «Թոմ Սոյերի արկածները», «Հեքլբերի Ֆինի արկածները» և «Արքայազնն ու մուրացկանը», որոնք ամերիկյան ամենահայտնի վեպերից են և հիշատակվում են որպես նրա ամենանշանավոր ստեղծագործությունները, լավագույնս արտացոլում են Ամերիկայի բնակչության ապրելակերպը: Մարկ Տվենը հայտնի է որպես ամերիկյան պատմվածքներում արկածախնդիրների հայր: Նա

մանկական գրականությունը ձերբագատեց ուսուցողական կապանքներից և այն օգտագործեց հասարակությունը քննադատելու նպատակով, որի համար էլ նրան կարելի է հավասարեցնել «Լուիս Կարոլի» հետ: «Թոմ Սոյերի արկածները», որը գրի է առնվել 1876թ., երբ հեղինակը քառասուն տարեկան էր, Ամերիկայի առօրյա կյանքում ընթացող խնդիրների հայելին է:

Մարկ Տվենի բոլոր պատմվածքներն ի մի բերելու դեպքում, կտեսնենք, որ դրանցից յուրաքանչյուրը մի մեծ խճանկարի մասնիկն է և այդ խճանկարը ոչ այլ ինչ է, քան Ամերիկայի տասնիններորդ դարի ժողովուրդն ու հասարակությունը: Հետևաբար, այս գրողի պատմվածքներից յուրաքանչյուրում կարելի է տեսնել Ամերիկյան հասարակության մի հատվածը: «Թոմ Սոյերի արկածները» և «Հեքլբերի Ֆինի արկածները» պատմվածքները ևս համարվում են մանուկների և պատանիների համար երկու գեղեցիկ ու արկածներով լի ստեղծագործություններ, որտեղ կարելի է տեսնել հասարակության տարբեր գծերը: Մարկ Տվենի ուշադրության կենտրոնում են նաև մանուկներն ու պատանիները և նա գտնում է, որ առօրյա մտահոգություններից բացի, պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նաև երեխաների ուսուցմանն ու դաստիարակությանը:

Իրանցի գրող, երգիծաբան և մեծ արվեստագետ Հուլանգ Մորադի Քերմանին աշխարհին հայտնի է որպես «Մաջիդի պատմվածքների» հեղինակ: Նա ծնվել է 1944թ. սեպտեմբերի 6-ին Իրանի Քերման քաղաքում: Մանկությունն անց է կացրել բավականին ծանր պայմաններում: Նրա կյանքի դժվարությունները քանիցս ավելին էին քան այն, որ նշվում է Մարկ Տվենի մասին: Նա ութ տարեկանից ամենաճանր պայմաններում զգում է կյանքի դառնությունները. միայնակ երեխա, ով զրկված էր հորից և մորից և իր կյանքի ամենակարևոր ցանկությունը, այսինքն՝ գիրք կարդալն, իրականություն դարձնելու համար այնպիսի մեծ տառապանքների է դիմանում, որոնք դժվար է պատկերացնել:

«Մաջիդի պատմվածքները» պարունակում է 39 պատմվածք, որոնցից յուրաքանչյուրը որոշակի թեմա է հետապնդում: Նրանց գլխավոր հերոսը Մաջիդն է՝ նիհար, խաղկոտ, գրքի սիրահար, մաթեմատիկայից փախչող և շարադրության ու գրականության առարկաների սիրահար մի տղա: Նա ապրում է մեծ մոր («Բի-բի»-ի) հետ: «Մաջիդի պատմվածքների» կարևորագույն առանձնահատկությունը դրանց օբյեկտիվ նկարագրությունն է:

Մորադին հստակ նշում է, որ պատմվածքներն ինքնակենսագրական բնույթ ունեն, սակայն այն իրողությունը, որն ի զորու չէ թաքցնել, այն է, որ հասարակության մեջ ապրել են ու ապրում են իր նման բազմաթիվ մարդիկ և նա չի կարող իրեն հասարակությունից առանձնացված անդամ համարել: Անկասկած, Մորադին լավ է գիտակցում, որ սեփական կյանքի պատմությունը ներկայացնելով, քննադատում է այն հասարակությունը, որտեղ ապրում է ինքը: «Մաջիդի պատմվածքները» 1985թ. արժանացավ տարվա լավագույն գիրք անվանակարգի մրցանակին:

Մորադի Քերմանիի պատմվածքներում ընթերցողը գրողին զուգընթաց, վերանայում է իր անցյալն ու ներկան, և այդ պատճառով էլ նրա երկերի լսարանը չի սահմանափակվում մանուկներով ու պատանիներով: Մեծահասակները ոգևորվում են սեփական մանկության հուշերը մտաբերելով, և վերանայում են սեփական համոզմունքներն ու գաղափարները: Ժողովրդական համոզմունքներից կարելի է տեսնել «Երազը» պատմվածքում, որտեղ հեղինակը ներկայացնելով ժողովրդական

հավատալիքներն ու կրոնական համոզմունքները, անդրադառնում է նաև աշխարհի ոչ հավերժական լինելուն և անհավատարմությանն ու կյանքը ճիշտ արժևորելուն, և հիշեցնում է ընթերցողին՝ չնոռանալ բարեգութ լինելու և կարեկցանքի ու ընկերակցության մասին: Այս պատմվածքը գրվել է Քերմանի շրջանի բարբառով և լի է տեղական բառերով ու ժողովրդական հավատալիքներով:

